Այո՛, յանկարծ պատահած մահը ես ոչ թէ Աստուծոյ պատիժ եմ համարում, այլ Նորա ամենագեղեցիկ բարերարութիւններից մէկը։ Դորա համար ես կըսպասեմ Նորան ոչ իբրև մի թշնամու, այլ իբրև մի բարեկամի, որ գալիս է ինձ տեսնելու աստուածային հայրական տան աւելի մի գեղեցիկ բնակարանը։ Մահը մեզ զարհուրեցնող դև չէ, այլ լուսոյ հրեշտակ. նա չէ քանդում, այլ շինում է, չէ խաւարեցնում իբրև անմիխիթար մութ գիշեր, այլ պայծառացնում է յաւիտենական փառքի համար։ — Անվրդով սրտով կըսպասեմ ես իմ վերջին ժամիս. թող գայ, հասնի, երբ էլ, որ և ինչ կերպով էլ որ Աստուծոյ հաճոյ է։ Բայց առաջուանից էլ կըպատրաստուեմ մահուան իմ կեանքիս ամեն մի օրը, որ ցէրը ինձ արթուն գտնի, երբ որ գալու լինի։ Ինձ համար էլ ստիպողական լինի այն յորդորը թէ՝ Ղ՝ Ի՝ Ն՝ Ա՝ Յ՝ Է՝ Ք՝ Ղ՝ Ա՝ Ն՝ Ա՝ Ն՝ Ա՝ Ն

օրերի այս նկարագիրը՝ որ քաղուածօրէն՝ գրեթէ բառացի կերպով հաւաքուած է չորս աւետարանիչների գրուածքից։

---

Երուսաղէմից 15 ասպարէզ հեռու Բեթանիայումը կար մի մարդ Ղազարոս անունով և ունէր երկու քոյր՝ մէկի անունը Մարիամ՝ միւսինը՝ Մարթա. Յիսուս Ղազարոսին սիրումէր իբրև իւր բարեկամին։ Ղազարոսը հիւանդացաւ. երբ Յիսուսին յայտնեցին նորա հիւանդութիւնը՝ ասաց. այն հիւանդութիւնը մեռնելու համար չէ՝ այլ Աստուծոյ փառքի համար՝ որ Աստուծոյ Որդին նորանով փառաւորուի. և երկու օրուայ ճանապարհ հեռացաւ։ Յիսուսի աշակերտները կարծումէին թէ՝ Նա Հրէաների ահից հեռացաւ՝ և երբ որ ասաց թէ՝ եկէք դարձեալ Հրէաստան գնանք՝ աշակերտները պատասխանեցին. «Վարդապետ՝ հէնց այժմ հրէաները քեզ կամենումէին քարկոծել և դու դարձեալ այնտեղ ես գնում»։ Յիսուս ասաց. «Ով որ ցերեկով կերթայ՝ չի գայթակղուիլ՝ որովհետև աշխարհիս լոյսը տեսնումէ՝ բայց թէ որ մինը գիշերով գնայ կը-գայթակղուի՝ որովհետև նորա հետ լոյս չկայ»։ այսինքն՝ բարի գործից վնաս չի գալ. իսկ վատ գործը ինքն արդէն վնաս է ու մնաս։ Յիսուս յայտնելով որ Ղազարոսը մեռել է՝ ասաց. «Ես էլ ուրախ եմ ձեր համար՝ որ պէտք է հաւատաք ինձ. հիմա եկէք գնանք նորա մօտ»։ Եւ նորա աշակերտներից Թովմասը իւր ընկերներին ասաց. դէ՛ եկէք մենք էլ գնանք ու նորա հետ մեռնենք։ Յիսուս երբ վերադարձաւ Բեթանիա՝ Ղազարոսը չորս օրուայ թաղուած էր. Մարթան երբ որ լսեց թէ Յիսուս գալիս է՝ նորա առաջը դուրս եկաւ և ասաց. Տէր՝ եթէ այստեղ էիր եղել՝ եղբայրս չէր մեռնիլ՝ բայց այժմ էլ հաւատումեմ թէ՝ ինչ որ Աստուծուց խնդրես՝ Աստուած քեզ կը տայ։ Յիսուս ասաց. քո եղբայրը յարութիւն կառնի. Մարթան ատասխանեց. գիտեմ վերջին օրումը յարութիւն կառնի։ Յիսուս ասաց՝ յարութիւնն ու կեանքը ես եմ. ով ինձ հաւատայ՝ թէպէտ և մեռնի՝ կապրի. և ամենը՝ որ կենդանի է և հաւատումէ ինձ՝ չի մեռնիլ յաւիտեան. սորան հաւատո՞ւմ ես։ Մարթան պատասխանեց. այո՛ Տէր՝ ես հաւատացի թէ Աստուծոյ որդի Քրիստոսը դու ես՝ որ պէտք է գայիր աշխարհ։

Յիսուս Ղազարոսի քոյր Մարթային՝ Մարիամի և սոյա մխիթարելու համար եկած բազմաթիւ հրէաների հետ գնաց Ղազարոսի

գերեզմանը, և տեսնելով Մարիամի, Մարթայի և ներկայ եղողների սուգը՝ յուզուեց, և լաց եղաւ։ Գերեզմանի մօտ Յիսուս ասաց. վերցրէք գերեզմանի քարը. Մարթան պատասխանեց, հիմա հոտած կըլինի, որովհետև չորս օրուայ է։ Յիսուս ասաց. չէ՞ որ քեզ ասացի թէ, եթէ հաւատաս՝ Աստուծոյ փառքը կըտեսնես։ Երբ որ քարը վեր կալան, Յիսուս աչքերը վեր բարձրացրեց և ասաց. Հայր, քեզանից շնորհակալ եմ որ ինձ լսեցիր. ես գիտէի որ ամեն ժամանակ ինձ լսումես. այս շուրջս եղած ժողովրդի համար եմ անում, որ հաւատան թէ դու ինձ ուղարկեցիր. յետոյ բարձր ձայնով աղաղակեց և ասաց. Ղազարէ, վեր կաց, դուրս եկ։ Ղազարը վեր կացաւ, ձեռքերն ու ոտքերը կապած էին, երեսն էլ վարշամակով պատած. Յիսուս ասաց, արձակեցէք դորան և թողէք երթայ։

Հրէաներից շատերը, տեսնելով այս՝ հաւատացին Յիսուսին. և նոցանից ոմանք էլ գնացին փարիսեցիների մօտ և պատմեցին Յիսուսի արածը։ Փարիսեցիներն ու քահանայապետները ատեան կազմեցին՝ կարծելով թէ ժողովուրդը Յիսուսին հաւատալով ու հետևելով նորան՝ թագաւոր կըհրատարակի ընդդէմ Հռովմայեցւոց, ասումեն. ինչ անենք, այն մարդը շատ հրաշքներ է գործում և շատերն էլ հաւատումեն նորան, կըգան Հռոմները և կը ջնջեն մեր ազգն ու տաճարը։

Կայիափա քահանայապետը նոցա ասում է. դուք ոչինչ չըգիտէք, և չէք էլ կարողանում մտածել թէ, լաւ է մեզ՝ որ մի մարդ մեռնի ժողովրդի համար և մեր բոլոր ազգը չըկորչի։ Այս բանը Կայիափան մարգարէանալով ասաց, թէ Յիսուս ազգի համար մեռնելու էր, և ոչ թէ միայն ազգի համար, այլ որ կռապաշտութեան ու անօրէնութեան մէջ կորած Աստուծոյ որդիքը մէկ տեղ ժողովի։

Այն օրից սկսած քահանայապետներն ու Հրէից մեծամեծները խորհուրդ արին նորան սպանել. և Յիսուս չըկարողանալով այլ ևս համարձակ շրջել Հրէաների մէջ աշակերտների հետ, գնաց անապատի մօտ եղած Եփրայիմ քաղաքը։

— Յիսուս Յարութիւն և կեանք է. ապաւինենք նորան որչափ և մեղքի ու անօրէնութեան մէջ մեռած լինինք՝ նորան ջերմեռանդն սրտով և աղօթելով, մեր խղճի ազդմամբ կըլսենք նորա կեցուցիչ խօսքը և չորեքօրեայ թաղուած Ղազարոսի նման յարութիւն կառնենք մարդավայել կեանք վարելու համար։

---

Մօտեցաւ Զատկի տօնը. Եփրայիմ քաղաքից և շրջակայքից գնացին Երուսաղէմ, Զատկի տօնին այնտեղ լինելու։ Հրէից քահանայապետներն ու փարիսեցիները պատուէր էին տուել թէ, եթէ մինը իմանայ թէ ուր է Յիսուս, յայտնի, որ բռնեն. և շատերը միմեանց հարցնումէին թէ արդեօք Յիսուս տօնին Երուսաղէմ կըգայ։

Յիսուս Զատկից վեց օր առաջ նորից եկաւ Բեթանիա. Ղազարոսի յարութեան համբաւը տարածուել էր ամենայն տեղ, ամենայն ոք շտապումէր ոչ միայն Յիսուսին այլ և յարութիւն առած Ղազարոսին տեսնել. քահանայապետները խորհուրդ արին որ Ղազարոսին էլ սպանեն, որովհետև Հրէաներից շատերը գնում և հաւատում էին Յիսուսին։

Տօնի համար Երուսաղէմ հաւաքուած ժողովուրդը երբոր լսեց թէ Յիսուս Երուսաղէմ է գալիս, արմաւենու ոստեր առած նորա առաջը դուրս եկան, աղաղակում էին ու ասում. Իսրայէլի օրհնուած Թագաւոր, որ տիրոջ անունով գալիս ես, ովսաննա։ Յիսուս էշի վերայ հեծած փառաւոր հանդիսով մտաւ Երուսաղէմ։ Այս հանդիսաւոր մուտքի ժամանակ, մի քանիսը այնտեղ գտնուած հեթանոսներից՝ Յիսուսի աշակերտ Փիլիպպոսին ասացին որ՝ կամենում են Յիսուսին տեսնել. Փիլիպպոսն ու Անդրէասը յայտնեցին Յիսուսին, որ պատասխան տուեց նոցա և ասաց. Հասաւ ժամանակը, որ փառաւորուի մարդու որդին։

Յիսուս ժողովրդեան աղաղակով Երուսաղէմի տաճարը մտնելուց յետոյ, արտաքսեց ամենքին՝ որոնք տաճարում վաճառում, գընում էին. հատուվաճառների և աղաւնեվաճառների սեղանները կործանեց. և ասաց. գրուած է, իմ տունը աղօթքի տուն կոչուի և դուք դորան աւազակների այր շինեցիք։—Եւ արդարև, տաճարը որ Աստուծոյ տուն լինելով՝ միմիայն աղօթքի համար պէտք էր պիտոյանար Հրէից. քահանայապետները դպիրներն ու փարիսեցիները իրանց կրօնի էական մասերը զանց անելով, միայն ծէսերի, ծեբերի աւանդութեանց և իրանց շահերին էին ծառայացնում, Աստուծոյ տունը վաճառքի հրապարակ դարձնելով։

Յիսուս Տաճարի մէջ բժշկեց կաղերին և կոյրերին. քահանայապետներն ու դպիրները տեսնելով այս հրաշքները, և մանուկների աղաղակը, որ տաճարի մէջ գոչումէին. Դաւթի որդուն օրհնութիւն,—բարկացան, ու ասացին նորան. լսո՞ւմես թէ ինչ են ա-

սում դոքա. Յիսուս պատասխանեց. դուք չէ՞ք կարդացել թէ, մանուկների և կաթնակեր տղաների բերանով կատարեցիր օրհնութիւնը. և նոցա Տաճարում թողնելով, գնաց Բեթանիա և գիշերը այնտեղ անցկացրեց։

— Մեր պատմութեան համեմատ Յիսուսի Երուսաղէմ գնալու ժամանակ Նորան տեսնել կամեցող հեթանոսները մեր Աբգար թագաւորի դեսպաններն էին, որոնք Աբգար թագաւորի հրամանով և թղթով ներկայանալով Յիսուսին, խնդրում էին, որ գայ Աբգարի հիւանդութիւնը բժշկի, իսկ եթէ չըգար, պէտք է Նորա պատկերը նկարէին ու բերէին։ Աբգար թագաւորը հեռուից, առանց տեսնելու, միայն լսելով Յիսուսի քարոզների և հրաշագործութիւնների համբաւը, հաւատացել էր որ նա կամ Աստուած է կամ Աստուծոյ որդի։ Յիսուս թէև միջոց չունեցաւ Աբգարի մօտ գնալու, բայց մի թուղթ գրել տուեց, ուր երանի է տալիս այն մարդուն, որ չըտեսած հաւատում է. խոստացաւ իւր համբարձումից յետոյ ուղարկել իւր աշակերտներից մէկին Աբգարին բժշկելու։ Յիսուս տեսնելով որ պատկերահանը աշխատում է և չի կարողանում նկարել իւր պատկերը, առաւ պաստառ, դրեց իւր երեսի վերայ և այսպէս իւր պատկերը տպաւորուեց պաստառի վերայ։ Այս պատկերը, որ կոչվում է անձեռագործ պատկեր կամ Դաստառակ, Աբգար թագաւորը սիրով ընդունեց և երկար ժամանակ մնում էր Եդեսիայի եկեղեցում։

— Երբ մենք ծաղկաղարդին կանաչ ոստեր ձեռքներիս բռնած ոլորանում ենք կանչում, պէտք է մտածենք թէ, Նա մեր հոգու և սրտի վերայ պէտք է թագաւորէ՝ եթէ Նորան ընդունելու հարկաւոր պատրաստութիւնը տեսել ենք. մեր խղճի ազգմանը մտիկ անելով, մաքրել ենք մեք ներքինը և զարդարել ենք մեր սիրտն ու հոգին առաքինութեամբ և մարդասիրել գործերով ու մտածողութեամբ։

---

Հրէից մեծամեծների ատելութիւնը հետզհետէ սաստկանում էր և կամենում էին Յիսուսին անպատճառ սպանել, և պատճառներ էին որոնում Նորան յանցաւոր դուրս բերելու. փարիսեցիները Հերովդէս թագաւորի մարդկանց հետ իրանց աշակերտներին ուղարկեցին Յիսուսի մօտ, Նորան որոգայթի մէջ ձգելու համար խօսքեր ասել տալու։ Այդ մարդիկը Յիսուսին ասացին. «Վարդապետ,

գիտենք որ ճշմարիտ ես, ոչ մէկից էլ քաշվում չես և կեղծաւորութիւն էլ չես անում. հիմա մեզ ասա, կայսեր հարկ տալ պէտք է թէ ոչ». Յիսուս նոցա խորամանկութիւնը իմացաւ և ասաց. «Ինձ ինչի՞ էք հարցնում, կեղծաւորներ, հարկի դրամը ինձ ցոյց տուէք. նոքա մի դրամ տուին. Յիսուս հարցրեց. ո՞ւմն է այս պատկերը կամ գիրը. ասումեն, կայսրինը. այն ժամանակ ասումէ նոցա. գնացէք, կայսրինը կայսրին տուէք, և Աստուծունը՝ Աստուծուն»։ Երբ որ լսեցին, զարմացան թողին ու գնացին։

Յիսուս Հրէից մեծամեծների նպատակաւոր հարցմունքներին պատասխան տալուց ու նոցա պապանձեցնելուց յետոյ, սկսեց քարոզել իւր աշակերտներին և ժողովրդին ու ասել. «Մովսէսի աթոռի վերայ նստեցին դպիրներն ու փարիսեցիք. ինչ որ կասեն ձեզ՝ արէ՛ք և պահեցէք. բայց նոցա գործերին մի նայէք. ծանր և դժուարակիր բեռներ են կապում ու դնում մարդկանց ուսի վերայ և իրանց մատներովն անգամ չեն կամենում շարժել։ Եւ խօսքը ուղղելով դէպի կեղծաւոր դպիրներն ու փարիսեցիները, ասաց.

Վա՜յ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ. երկնքի արքայութիւնը մարդկանց առաջ փակումէք. դուք չէք մտնում, և որոնք կամենում են մտնել, թոյլ չէք տալիս մտնել։ Վա՜յ ձեզ, կեղծաւոր դպիրներ և փարիսեցիներ, որ ծով ու ցամաք մանէք գալիս որ մէկին որսաք, և երբ որ յաջողումէ ձեզ այդ, ձեզանից կրկին անգամ աւելի գեհենի որդի էք դարձնում նորան»։ Եւ կեղծաւոր փարիսեցիների ու դպիրների բոլոր անօրէնութիւնները նոցա երեսովը տալուց յետոյ իւր խօսքը Հրէաներին և նոցա Երուսաղէմ քաղաքին ուղղելով ասաց. «Երուսաղէ՜մ Երուսաղէմ, որ մարգարէներին կոտորում էիր. և քեզ զգաստացնողներին քարկոծում, քանի քանի անգամ կամեցայ քո մանուկներին ժողովել՝ ինչպէս հաւը իւր ձագերին իւր թեւերի տակն է ժողովում՝ բայց չկամեցաք. ահա ձեր տունը ձեզ աւերակ թողուած լինի. այսուհետև էլ չէք տեսնիլ ինձ մինչև ասէք Տիրոջ անունով եկածը օրհնուած լինի»։

---

Յիսուսի աշակերտներից Յուդան, երբ որ տեսաւ թէ Հրէից մեծամեծները կամենումեն Յիսուսին բռնել և սպանել, նորանից առաւ երեսուն դահեկան և խոստացաւ մատնել. աշակերտները այս բանը չէին իմանում. բայց Յիսուս իւր Աստուածային իմաստութեամբ գիտէր. ուստի Բաղարջակերաց օրը՝ երեկոյեանը երբ Յիսուս տաս-

ներկու աշակերտների հետ նստած էր, և ընթրիք էին անում, ասաց. Ձեզանից մինը ինձ պէտք է մատնի. աշակերտները շատ տրտմեցին, և սկսեցին մի մի հարցնել, միթէ ես կըլինիմ։ Յիսուս պատասխան տուեց. ով որ ինձ հետ ուտում է և ձեռքը ինձ հետ սկաւառակը տարաւ, նա է։ Մարդոյ որդին, ինչպէս իւր համար գրուած է, պէտք է գնայ. բայց վա՜յ այն մարդուն, որի ձեռքով պէտք էր նա մատնուի, լաւ է որ նա ծնուած չըլինէր։ Երբ որ Յուդան էլ ասաց, միթէ ես կըլինիմ։ Յիսուս պատասխանեց դու ասացիր։ Ընթրիքի ժամանակ Յիսուս առաւ հաց, օրհնեց, կտրեց և տուեց աշակերտներին ու ասաց. «Առէք կերա՛յք, այս է մարմին իմ»։ (առէք կերէք, այս է իմ մարմինը). առաւ բաժակ գոհացաւ տուեց նոցա և ասաց. «Արբէք ի դմանէ ամենեքին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց»։ (խմեցէք դորանից ամենքդ, որովհետև այդ՝ նոր ուխտի՝ *) իմ արիւնն է. որ շատերի աղագաւ թափվում է մեղքի թողութեան համար)։ Երբ աշակերտները սկսեցին վիճել թէ՝ նոցանից ո՞վ մեծ կըլինի. Յիսուս խոնարհութեան օրինակ տալու համար վար դրեց իւր զգեստը զենջակ կապեց, կոնքի մէջ ջուր լցրեց և աշակերտների ոտքերը լուալուց ու զենջակովը սրբելուց յետոյ, նորից իւր զգեստը հագաւ նստեց ու ասաց. գիտէք ձեր համար ինչ արի. դուք ինձ վարդապետ և տէր էք կոչում և լաւ էք անում, որովհետև իսկը եմ. հիմա, ես որ տէր և վարդապետ եմ, ձեր ոտքերը լուացի, դուք էլ պարտաւոր էք միմեանց ոտք լուանալ։

Յիսուս այս խոնարհութեան դասն էլ աշակերտներին տալուց յետոյ, Յուդային ասաց. հիմա ինչ որ անելու ես արա. աշակերտները կարծեցին թէ, որովհետև դրամները Յուդայի մօտն է, Յիսուս պատուիրեց Զատկի տօնի համար պատրաստութիւններ տեսնել կամ աղքատներին ողորմութիւն տալ։ Երբ Յուդան դուրս

(*) Հին ուխտի արիւնը բաղարջակերաց տարևոր գառան արիւնն էր. այդ ուխտը Մովսէս Իսրայելացիներին աւանդեց նոցա Եգիպտոսից դուրս գալու ժամանակ, պատուիրելով, որ նախքան դուրս գալը ի յիշատակ եգիպտական ծառայութիւնից և սատակիչ հրեշտակի կոտորածից աղատութեան՝ մորթեն մի տարեկան արու ոչխար, արիւնը բարաւորների վերայ դրոշմեն, իսկ միսը ամբողջ առանց կոտորելու խորովեն և պատրաստի, ոտքի վերայ ուտեն և ճանապարհ ընկնեն.

գնաց, Յիսուս ասաց. Այժմ փառաւորուեց մարդոյ որդին, և Աստուած նորանով փառաւորուեց. իմ որդիներ, մի փոքր ժամանակ ձեզ հետ եմ, կորոնէք ինձ և չէք գտնիլ. ինչպէս հրէաներին ասացի, այժմ էլ ձեզ եմ ասում, թէ ուր որ ես գնումեմ, դուք չէք կարող գալ։ Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ միմեանց սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի։ Ձեր միմեանց սիրելովը կիմանան որ իմ աշակերտներ էք. Պետրոսը երբ որ ասաց. Տէր ուր պէտքէ գնաս որ չրկարողանամ գալ քո ետևից, որ արդէն իմ անձս դրել եմ քո սիրուն։ — Յիսուս պատասխան տուեց. քո անձն դրել ես իմ սիրուն. ճշմարիտն եմ ասում, (այս գիշեր) դեռ հաւը չի խօսած, դու երեք անգամ կուրանաս ինձ։

Յիսուս ընթրիքից յետոյ աշակերտների հետ գնաց Ձիթենեաց լեռը, յետոյ Գեթսեմանի ձորը, այնտեղ թողնելով աշակերտներին՝ ասաց. նստեցէք այդտեղ մինչև գնամ աղօթք անեմ։ Հետն առաւ Պետրոսին և Զեբեդիայի երկու որդուոցը — Յովհաննէսին ու Յակոբոսին, սկսեց տրտմել ու հոգալ. և ասաց, հոգիս մահու չափ տրտում է. այստեղ կացէք և հսկեցէք. մի փոքր հեռանալով, երեսի վերայ ընկաւ, աղօթքի կացաւ և ասաց. իմ Հայր, եթէ հնարաւոր է, (տրտմութեան) այս բաժակը թող անցնի, բայց ոչ թէ ինչպէս ես եմ կամենում, այլ ինչպէս Դու կըկամենաս։ Դարձաւ տեսաւ որ աշակերտները քնած են, ասաց. այդպէս մի ժամ էլ չրկարողացաք արթուն կենալ. արթուն կացէք, աղօթք արէք որ փորձութեան մէջ չընկնիք. երեք անգամ Յիսուս աղօթքից յետ դառնալով և աշակերտներին քնած տեսնելով ասաց. ննջեցէք այսուհետև և հանգստացէք։ Մարդոյ Որդու մատնուելու ժամանակը հասել է. եկէք այստեղից գնանք, որովհետև մատնողը մօտացել է։ Երբ Յիսուս այս բաներն էր խօսում, ահա Յուդան և նորա հետ ամբոխը սրերով և բրերով. մօտեցաւ Յիսուսին ասաց. ողջոյն, Վարդապետ, և համբուրեց. որովհետև ասել էր թէ ում որ համբուրի՝ նա է Յիսուսը, նորան բռնեն, Յիսուս պատասխան տուեց. Յուդա, համբուրելով՞ ես մատնում ինձ։ Բռնեցին Յիսուսին և տարան Աննա քահանայապետի տունը, Յիսուսին հեռուից հետևումէին Պետրոսը և Յովհաննէսը. որովհետև Յովհաննէսը քահանայապետին ծանօթ էր, մտաւ գաւիթը, իսկ Պետրոսը մնաց դուռը. և երբ Յովհաննէսի խնդրանքով ներս ընդունուեց, և դռնապան աղջիկը հարցրեց, միթէ դու

էլ այն մարդու (Յիսուսի) աշակերտներից ես. նա ասաց՝ չեմ. Պետրոսին հետզհետէ երեք անգամ հարցրին, և նա երեք անգամն էլ ուրացաւ իւր Յիսուսի աշակերտ լինելը։ Յիսուս դարձաւ մտիկ արեց Պետրոսին և յիշեց մինչև հաւի խօսիլը երեք անգամ ուրանալու խօսքը. Պետրոսը զղջաց. դուրս եկաւ գաւթից և սկսեց դառն արտասուել։

Մարդիկը, որոնց յանձնուած էր Յիսուս պահելու համար, ծիծաղումէին նորա վերայ, զարնումէին, երեսը ծածկելով տանջումէին ու ասում. մարգարէացիր թէ, ով էր որ քեզ խփումէ, և շատ նախատական ու հայհոյութեան խօսքեր էին ասում։

---

Լոյսը բացուելուն պէս, Հրէից ծերերը, քահանայապետներն ու դպիրներն ատեան կազմեցին և Յիսուսին հարցրին, «եթէ դու ես Քրիստոսը, մեզ ասա». Յիսուս պատասխան տուեց. եթէ ասեմ, չէք հաւատալ. եթէ ձեզ բան հարցնեմ, պատասխան չէք տալ կամ չէք արձակիլ։ Բայց այսուհետև Մարդոյ Որդին կընստի Հօր Աստուծոյ աջ կողմը։ Ամենքը միասին ասումեն, ուրեմն Աստուծոյ որդին դո՞ւ ես. Յիսուս պատասխան տուեց, դո՞ւք էք ասում որ ես եմ։ Նոքա ասացին. մեզ էլ ինչ վկայութիւն է հարկաւոր. մենք արդէն իսկ մեր ականջով լսեցինք դորա բերանից։ Եւ Յիսուսին քահանայապետի մօտից տարան Պիղատոսի մօտ. որովհետև հրէաները Զատիկ պէտք անէին, չմտան Պիղատոսի ապարանքը. ինքն Պիղատոսը դուրս եկաւ և ասաց. ինչ չարախօսութիւն ունէք այս մարդու մասին. նոքա պատասխանեցին. եթէ չարագործ չլինէր չէինք բերիլ քեզ մօտ։ Պիղատոս ասաց. ձեր օրէնքով դատեցէք դորան։ Հրէայք պատասխանեցին. մեզ արժան չէ որ մարդ սպաննենք. Պիղատոս ներս գնաց իւր ապարանքը և Յիսուսին իւր մօտ կանչելով ասաց. Հրէաների թագաւորը դո՞ւ ես. Յիսուս պատասխան տուեց. դո՞ւ ես ասում, թէ ուրիշներն են ասել քեզ իմ մասին։ Պիղատոսը ասաց. միթէ ես հրէա՞յ եմ. քո ազգն ու քահանայապետները մատնեցին քեզ ինձ մօտ. ինչ ես արել։ Յիսուս պատասխանեց. իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ. եթէ այս աշխարհից լինէր, իհարկէ իմ սպասաւորները կըկռուէին, որ Հրէաներից չըմատնուեմ. բայց հիմա իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ։ Ուրեմն դու մի թագաւոր մարդ ես. Յիսուս պատասխան տուեց. դո՞ւ ես ասում որ թագաւոր եմ. այդ բանի հա-





մար էլ ծնուել եմ, և դորա համար էլ աշխարհ եմ եկել, որ ճշմարտութեան համար վկայեմ. ով որ ճշմարիտ է կրլսի իմ խօսքը։ Պիղատոսը Յիսուսին այսպէս հարցուփորձ անելուց յետոյ ոչինչ չրգտնելով՝ դուրս եկաւ հրէաների մօտ և ասաց. ես նորա մէջ մի պատճառ չեմ գտնում։ Ձեր սովորութեան համեմատ Զատկի տօնին բանտարկեալներից մէկը պէտքէ արձակեմ. կրկամենա՞ք որ Յիսուսին — հրէաների թագաւորին — արձակեմ։ Հրէաները միաբերան գոչեցին դորան ոչ, այլ Բարաբբային. իսկ Բարաբբան մի աւազակ էր։ Այն ժամանակ Պիղատոս բռնեց Յիսուսին և գանակոծ արեց. իսկ զինուորները փշից պսակ շինեցին և դրին նորա գլխին և ծիրանի հագցրին. մօտ էին գալիս և, ասրածկաց, հրէաների թագաւոր ասելով՝ ապտակ էին խփում։ Երբ որ Պիղատոս նորից դուրս եկաւ և հրէաներին ասաց թէ Յիսուս յանցաւոր չէ. քահանայապետներն ու սպասաւորները աղաղակեցին. խաչիր, խաչիր դորան։ Ասաց Պիղատոս, առէք և դուք խաչեցէք. որովհետև ես դորա մէջ մի յանցանք չեմ գտնում. հրէաները պատասխան տուին. մենք օրէնք ունինք, և մեր օրէնքին համեմատ պէտքէ մեռնի, որովհետև ինքն իրան Աստուծոյ որդի է անուանում։

Պիղատոս կամենումէր արձակել Յիսուսին մանաւանդ այն պատճառով, որ նորա կինը երազ տեսած լինելով Յիսուսի մասին՝ թախանձումէր արձակել նորան։ Պիղատոս նորից իւր մօտ կանչեց Յիսուսին և ասաց. ո՞ր տեղացի ես։ Յիսուս պատասխան չտուաց. իմ հետ չե՞ս խօսում, ասաց Պիղատոսը. չե՞ս իմանում որ, իշխանութիւն ունիմ քեզ խաչելու և ազատ թողնելու։ Յիսուս պատասխան տուաց. դու իմ վերայ իշխանութիւն չէիր ունենալ, եթէ վերևից տրուած չլինէր քեզ։ Ինձ՝ քեզ մօտ մատնողինն է մեղքը։ — Որքան հնարքներ էր փնդռում Պիղատոս Յիսուսին ազատելու, Հրէաները այնքան պնդումէին և Յիսուսին որպէս Հռոմայեցւոց կայսրութեան ազատամբ թագաւորել ձգտող քաղաքական յանցաւոր ներկայացնելով, աղաղակումէին դէպի Պիղատոս. եթէ դորան արձակես, կայսեր բարեկամ չես. որովհետև ով իրան թագաւոր է անուանում, կայսրին հակառակ է։

Պիղատոս վախենալով այս սպառնալիքից. Զատկի Ուրբաթ օրը, վեցերորդ ժամին ատեան գալով, Հրէաներին ասաց. ահա ձեր թագաւորը ձեզ։ Հրէաները աղաղակեցին. հեռացրու մեզանից,

հեռացրու և խաչիր։ Պիղատոսն ասաց. ես, ձեր թագաւորը խաչե՞մ։ Քահանայապետները պատասխան տուին. մենք բացի կայսրից՝ թագաւոր չունենք։ Այն ժամանակ Պիղատոս յանձնեց Յիսուսին Հրէաներին՝ որ խաչեն։

—Նախանձն ու ատելութիւնը, փակելով մարդուս բանականութեան և խղճի աչքերը, արդար անմեղն համեմատելով աւազակի հետ՝ դատապարտումեն արդար անմեղին։ Այսպէս վարուեցին հրէաները Յիսուսի և Բարաբբայի վերաբերութեամբ, պահանջելով՝ ազատ, արդար Յիսուսին խաչել, իսկ աւազակ բանտարկեալ Բարաբբային ազատել։ Այսպէս են մարդիկ, երբ տեսնումեն որ մի անմեղի արդար գործը, առաքինի վարքը դատապարտումեն՝ իրանց չար գործը և անօրէն վարմունքը, հնարք են որոնում արդարին կորցնելու, որ իրանց չարութիւնը չը յանդիմանուի։ Դոքա Բարաբբայի ընկերներն են և մասն չունին Յիսուսի հետ։

---

Յիսուս հրէաների ձեռքը յանձնուելուց յետոյ, ինքն անձամբ իւր խաչը ուսին դրած տանումէր դատապարտութեան տեղը, և տեսնելով որ իրան ետևից գնացող բազմութեան միջից կանայք լաց ու կոծ են անում՝ դարձաւ դէպի նոցա և ասաց. Երուսաղէմի աղջիկներ, իմ՝ վերայ լաց մի լինիք. այլ ձեր և ձեր որդւոց վերայ լաց եղէք. որովհետև՝ կրգայ օր, որ կասեն, երանի ամուլներին և անպտուղ արգանդներին՝ որոնք չը ծնան, և ստինքներին՝ որոնք երեխաներ չը դիւցրին. այն ժամանակ կրսկսեն ասել լեռներին թէ ընկէք մեր վերայ, և բլուրներին՝ թէ ծածկեցէք մեզ. եթէ դալար փայտին այս են անում, չորն ի՞նչ կրլինի։ Յիսուս խաչը ուսին բարձրացաւ Գողգոթա. խաչի վերայ թափելով իւր արիւնը, մարդկութիւնը փրկեց, կտակելով նորան աւետարանն ու երկնից արքայութիւնը։ Յիսուսին Գողգոթայի վերայ խաչեցին. աջ և ձախ կողմերը խաչուած էին մի մի աւազակ. և որովհետև սովորութիւն էր որ խաչի ճակատին գրումէին դատապարտեալի յանցանքը, Յիսուսի խաչի վերայ Պիղատոս Եբրայեցերէն, Դաղմատերէն և Յունարէն գրել էր տուել. «Յիսուս Նազորեցի՝ թագաւոր Հրէից»։ Զինուորները Յիսուսի հանդերձները չորս մասն բաժանեցին, իսկ պատմուճանի վերայ, որովհետև անկար էր, չը կամեցան պատառել, վիճակ ձգեցին։

Յիսուս խաչի վերայ իւր խաչողների ու նախատողների համար աղօթումէր և ասում. Հայր, ներիր սոցա, որովհետև չեն իմանում ինչ են անում։ Հրէից իշխանները անարգումէին Նորան և ծաղրելով ասում. ուրիշներին կեանք տուեց, թող իրան ապրեցնի՝ եթէ դա է Քրիստոսն Աստուծոյ ընտրեալ որդին։ Զինուորներն էլ ծաղր էին անում, և առաջ գալով քացախ էին մօտեցնում ու ասում. եթէ Հրէից թագաւորը դու ես, քո անձը փրկիր։ Յիսուսի հետ խաչուած ձախակողմեան աւազակն էլ հայհոյումէր և հեգնելով ասում. չէ՞ որ դու ես Քրիստոսը. փրկիր քո անձը և մեզ։ Աջակողմեան աւազակը սաստեց Նորան և ասաց. չե՞ս վախենում Աստուծուց, որ նոյն պատժի մէջն էլ ես. մենք, յիրաւի, մեր չար գործերին արժանի հատուցումն ստացանք. և սա մի վատ բան չէ արել. և ասաց Յիսուսին. Տէր, ինձ յիշիր, երբ որ Քո թագաւորութեամբ գաս։ Յիսուս պատասխան տուեց. ճշմարիտն եմ ասում, այսօր ինձ հետ դրախտում կլինիս։

Յիսուսի խաչի տակը կանգնած էին Յիսուսի մայրը, և նորա մօրաքոյրը, Մարիամ Կղէոպան և Մարիամ Մագդալենացին. Յիսուս երբ որ տեսաւ մօրն ու իւր սիրելի Յովհաննէս աշակերտին՝ ասաց մօրը. կին դու, ահա քո որդին. Յովհաննէսին էլ ասաց. ահա քո մայրը։ Եւ այն օրից Յովհաննէսը Մարիամ աստուածամօրը առաւ իւր մօտ։ Յիսուս երբ տեսաւ հայրական տնօրէնութիւնները բոլորը կատարուել են, և ինքն էլ իւր որդիական պարտքը կատարելով՝ իւր մօրը յանձնեց Յովհաննէսի խնամոցը, ասաց. Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ ես բացի թողի արել ինձ։ Վեցերորդ ժամից մինչև իններորդ ժամը երկիրը մթնեց և արեգակը խաւարեց, Տաճարի վարագոյրը պատռուեց, երկիրը շարժուեց. Յիսուս բարձրաձայն, Հայր, իմ հոգին քո ձեռքն եմ աւանդում, ասելով՝ հոգին աւանդեց։ Հարիւրապետը, որ այնտեղ կանգնած էր տեսնելով այս ամենը, Աստուծոյ անունը փառաւորեց ու ասաց. արդարև, այս մարդը արդար էր. և այնտեղ գտնուած ժողովուրդը, բաղխումէին իրանց կուրծքը։ Որովհետև օրը ուրբաթ էր, որպէս զի մարմինները շաբաթ օրը խաչի վերայ չըմնային, Հրէաները Պիղատոսին խնդրեցին, շուտով մեռցնելու համար խաչուածների բարձերը փշրել, որ շուտով թաղեն. Պիղատոսն էլ հրաման տուեց. զինուորները երկու աւազակների բարձերը փշրեցին, բայց երբ Յիսուսի մօտ եկան, տեսան որ նա արդէն մեռել է. միայն

զինուորներից մինը իւր գեղարդով խոցեց Յիսուսի կողը և արիւն ու ջուր դուրս եկաւ։

---

Յոսէփ Արիմաթացին, որ հրէաներից ծածուկ աշակերտումէր Յիսուսին, խնդրեց Պիղատոսից Յիսուսի մարմինը և Նիկոդիմոսի հետ միասին Հրէից օրէնքին համեմատ կտաւով և խնկերով պատեցին, թաղեցին մի նորափոր գերեզմանի մէջ, և մի մեծ քար էլ գերեզմանի վերայ դրին. այնտեղ էին Մարիամ Մագթաղենացին և այլ կանայք։

Հետևեալ օրը Հրէից քահանայապետներն ու փարիսեցիները եկան Պիղատոսի մօտ և ասացին. Տէր, մոռաբերումենք որ այն մոլորեցուցիչը (Յիսուս) մինչ դեռ կենդանի էր, ասումէր թէ երեք օրից յետոյ յարութիւն կառնեմ։ Հիմա, հրամայիր գերեզմանի վերայ հսկողութիւն լինի մինչև երեք օր. գուցէ աշակերտները գիշերը գան ու գողանան և ասեն ժողովրդին թէ յարութիւն առաւ. և յետին մոլորութիւնը առաջինից վատ լինի։ Պիղատոս իրաւունք տուեց, և նորա գերեզմանի վերայ պահապաններ դրին և վէմը զօրականների ներկայութեամբ կնքեցին։

---

Շաբաթ երեկոյեանը, Մարիամ Մագթաղենացին և այլ կանայք եկան Յիսուսի գերեզմանը տեսնելու։ Եւ ահա մեծ շարժում եղաւ. որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով, գերեզմանի քարը հեռու գլորեց և նստեց նորա վերայ. հրեշտակը փայլակի նման էր, իսկ նորա հանդերձը, ինչպէս ձիւն։ Հրեշտակի ահից պահապանները շփոթուեցին և մեռեալի նման վայր ընկան։ Հրեշտակը կանանց ասաց. դուք մի վախենաք. գիտեմ, խաչուած Յիսուսին էք փնդռում. այստեղ չէ, որովհետև յարութիւն առաւ։ Եկէք, նորա եղած տեղը տեսէք. և շուտով գնացէք նորա աշակերտներին ասացէք, թէ յարութիւն առաւ. և ձեզանից առաջ Գալիլիայում կըլինի, այնտեղ նորան կըտեսնէք։

Եւ երբ որ կանայքը գերեզմանը տեսնելուց յետոյ մեծ ուրախութեամբ գնումէին. Յիսուս նոցա պատահեց և ասաց. ողջ էք, նոքա էլ մօտեցան Յիսուսին և երկրպագութիւն տուին։ Յիսուս ասաց. մի վախենաք, գնացէք իմ եղբայրներին ասա-

ցէք, որ Գալիլիա գնան և այնտեղ ինձ տեսնեն։ Իսկ տասն և մէկ աշակերտները գնումեն Գալիլիա այն լեռը, ուր ժամադիր էր եղել Յիսուս. երբ որ տեսան Յիսուսին երկրպագութիւն արին իսկ ոմանք տարակուսութեան մէջ ընկան։ Յիսուս նոցա ասաց. երկնքի և երկրի մէջ ամէն իշխանութիւն ինձ տրուեց. ինչպէս Հայրը ինձ ուղարկեց. ես էլ ձեզ եմ ուղարկում. գնացէք բոլոր հեթանոսներին քարոզեցէք, նոցա մկրտեցէք Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյ անունով. սորվեցրէք այն ամենը, ինչ որ ձեզ պատուիրեցի. և ահաւասիկ ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը։

---

Երբ Յիսուս յարութիւն առաւ, և ուշաթափ եղած զօրականները սթափուեցին, ոմանք գնացին քաղաք և այս ամենը պատմեցին։ Քահանայապետներն ու ծերերը խորհուրդ արին և զօրականներին շատ արծաթ տուին ու ասացին. կասէք որ գիշերը, երբ մենք քնած էինք, աշակերտները եկան գողացան. և թէ խօսքը դատաւորին հասնի, մենք նորա կամքը կառնենք։ Եւ նոքա արծաթն առնելով այնպէս արին, ինչպէս սովորել էին. և այս համբաւը հրէաներից դուրս եկաւ՝ մինչև այսօր։

Հրէաները իրանց քահանայապետների ու մեծամեծների հնարագիտութեամբ մոլորուած՝ համարումեն թէ Յիսուսի աշակերտները գիշերը գողացան Յիսուսի մարմինը. մենք հաւատումենք որ Յիսուս յարութիւն առաւ և իւր առաքեալներին երևալուց յետոյ պատուիրեց բոլոր հեթանոսներին քարոզեն ու մկրտեն, խոստանալով մինչև աշխարհիս վախճանը իւր հաւատացեալների հետ լինել. բայց ի՞նչ եղաւ Յուդան։

Յուդան տեսնելով որ Յիսուս դատապարտուեց, զղջաց. — ստացած արծաթը դարձրեց քահանայապետներին ու ժողովրդեան ծերերին և ասաց. մեղանչեցի, որ արդար արիւնը մատնեցի. նոքա էլ ասացին մեզ փոյթ չէ. դու գիտես։ Յուդան արծաթը տաճարի մէջ ձգեց գնաց և խեղդուեց։

— Զար է զրպարտութիւնը, չար է դաւաճանութիւնը, և բարոյապէս ու նիւթապէս սպանումէ զրպարտեալին և դաւաճանուածին. բայց երբ ճշմարտութիւնը յայտնվումէ, այն ժամանակ զրպարտութեամբ մեռեալը յարութիւն է առնում, իսկ զրպարտիչն ու մատնիչը Յուդայի պէս յուսահատութիւնից խեղդվումէ։

Ցիսուսի պէս աղօթենք մեզ դաւաճանողների համար՝ աղաչելով որ Աստուած ներէ նոցա զիրդ տալով՝ վասն զի չեն իմանում ինչ են գործում։

Շնորհաւոր Յարութիւն Քրիստոսի։ Քրիստոս յարեաւ ի մեռելոց՝ առաջին պտուղն յարութեան ննջեցելոց։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ *)

## ՓԱՐԻԶ։

### ԳԼՈՒԽ Ա.

Ընդհանուր նախադիտելիք։ — Զգողական։ կենտրոնացուցիչ զօրութիւնը Փարիզի։ — Փարէզը թռչունի թռիչքի բարձրութիւնից։ — Փարիզի Լիւտեցիա կոչուած ժամանակից մինչեւ առաջին յեղափոխութեան ժամանակները։ եւ առաջին ժամանակներից մինչեւ եօթանասուն թուականը այժմեան դարու։ — Փարիզը ինչպէս կենտրոն Եւրոպայի մտաւորական քաղաքական կեանքի։

---

Եթէ յայտնի առածը ճշմարիտ է Հռովմ քաղաքի մասին՝ իբր թէ ամեն ճանապարհ առաջնորդուում է դէպի Հռովմ։ այժմեան Եւրոպայի նկատմամբ՝ աւելի ճշմարիտ կլինէր Փարիզին վերագրելը նոյն առածի։ կարծես մէկ զարմանալի՝ մոգական՝ գրաւիչ և բոլորովին առանձին բան պարունակվում է Փարիզեան կամ Փարէզ բառերի մէջ։ Հիմա էլ՝ երբոր Փարէզը՝ ինչպէս Ֆրանսիոյ մայրաքաղաք՝ կորցրել է իւր քաղաքական նշանաւոր մասը՝ իւր շլացնող փայլը՝ և իւր ահագին տիրապետող ոյժը Եւրոպական կեանքի բոլոր մնացած տարրերի վերայ — հէնց այժմ էլ (ինչ ուզեն թող ասեն և գոռան գերմանացիք) Փարէզը այնուամենայնիւ մնում է ըստ նշանակութեան առաջին քաղաքը Եւրոպայում։

Շատ ծիծաղելի է կարդալ մէկ նոր և ընդարձակ գերմանական համարէն գիտութեանց ժողովածուի մէջ այն փիլիսոփայական դատողութիւնները՝ որոնց մէջ ասում է այդ նշանակութեան առիթով Փարիզի մասին յօդուած կազմող խորամիտ Գերմանացին։ «Նշանաւոր մասամբ կարելի է Փարիզից խլել աշխարհի մայրաքաղաք կոչուելու անդ-

---

*) Սոյն յօդուածի թարգմանութիւնը յետոյ ստացուեց նաեւ Մայր Աթոռոյս ձեռագրանի երբեմն աշակերտ Պ. Թադէոս Պալէանից։